Գիտություն

ՄԱՅԻՍ
№ 5
(306)
2017 թ.

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի թերթ ● Հրատարակվում է 1993 թ. փետրվարից

ՄԵՐ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԻ ՄԱՅԻՍԸ

Մենք կանք, զի գիտենք կռվել ու կռվում ենք հանուն հայրենիի

Նաիրի ԶԱՐՅԱՆ

ԶԱՅՆ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ

Հայո՜ց քաջեր,
Այս խոլ դառնագոռոչ թոհուբոհին,
Հիշեք ձեր թիկնագեղ նախնյաց ամպրոպաշունչ ուղին
Այն օրերից,
Երբ նոր էր Հայկը դեռ լարում
Իր լայնալիճ աղեղը:
Հին է ժողովուրդը մեր,
Ինչպես անունը բրոնզափայլ Բաբելոնի:
Թուրքն իր որսը խորովել դեռ չգիտեր,
Մենք աստվածներ էինք ձուլում
Ու վայելում գինի:

Թող ձեզ ոգեշնչե հայրենաշեն արքա Տիգրանը Մեծ.
Որ մի ձեռքով բռնեց եղջյուրն Արևելքի,
Եվ մի ձեռքով՝ եղջյուրն Արևմուտքի,
Եվ զույգ ահեղ ցուլերի պես նրանց ի բաց վանեց՝
Սահմանելով այն հողն ավանդական,
Որ դարերով եղել է Հայաստան:
Նոր քաղաքներ շինեց,
Քաջալերեց գուսանական արվեստ,
Կրծքին արև առավ իբրև նետակայուն զրահ:
Եվ քանդակեց իր կերպարանքը վեստ
Մետաղածույլ դրամների
Ե՛վ իր դարի,
Ե՛վ փոթորկոտ մեր պատմության վրա

Այստեղ կանգնե՛ք մի պահ,
Խոնարհվեցե՛ք,
Ինչպես խոտերն են խոնարհվում արշալույսից առաջ:
Արյան մառախուղից
Ելնում է Վարդանի պատկերը սեգ
Եվ աջը մեզ մեկնած՝ կրկին գոչում է.
- Հա՛յ քաջեր, հառա՜ջ...

Այն ահեղ Ավարայրում
Իրար դիպան երկու զորություններ,
Պարսիկը ռազմական իր փղերով,
Հայոց քաջերը հայրենյաց սիրով,
Ընկան փղերը բիրտ,
Ընկան քաջեր բոցարյուն,
Ընկավ և քաջ Վարդանը շառաչով թշնամասաստ:
Բայց գոռ պարսիկն ահա նիզակաբեկ՝
Քաշվեց իր հողը բարբարոս
Եվ իր սրտում ասաց,
- Հայե՜ր, թո՛ղ Ահրիմանը ձեզ տանի,
Կռվում եք... ապրեցե՛ք:

Այո, կռվել ենք մենք,
զարկել մեր դարավոր
ոսոխներին,
զի մենք սիրում ենք մեր
հայրենիքը,
ու պիտի ապրենք հանուն նրա:



ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Այս մայիսին մենք 99-րդ անգամ հիշում ենք 1918 թ. մայիսին թուրք զավթիչների դեմ տարած պատմական հաղթանակը կերտողներին:

Որքան հեռանում ենք այդ ժամանակներից, այնքան ավելի է մեծանում այդ հաղթանակի նշանակությունը հայ ժողովրդի ճակատագրում:

Որովհետև Էրզրումը, Սարիղամիշը, Կարսը, Ալեքսանդրապոլը դավաճանաբար թուրքերին հանձնելուց հետո, երիտթուրքական քաղաքական ու ռազմական իշխանություններին թվում էր, որ իր տարած հաղթանակներից հետո, ուժասպառ եղած հայկական ուժերն այլևս ուշքի չեն գա ու Թիֆլիսի ու Երևանի ուղղությամբ արշավը համարում էին զբոսանք:

Թուրքական զավթիչները չորս ուղղությամբ մխրճվելով Արևելյան Հայաստանի տարածք համոզված էին, որ չորս ուղղությամբ զարգացնելով իրենց զորամասերի հարձակումը, պարտություններից ու նահանջից հուսալքված հայկական զորամասերին կզրկեն ուժերը կենտրոնացնելու հնարավորությունից, չեն դիմանա ճնշմանը և գլխովին կջախջախվեն:

Սակայն, օրհասական պահին, երբ թուրք հրոսակները սպառնում էին էջմիածնին ու Երևանին, երբ գլխովին ոչնչանալու վտանգը կախվել էր արևելահայության գլխին, երբ թվում էր, որ այլևս ելք չկա, կատարվեց այն, ինչ մահացու վտանգի պահին համախմբեց հայ ժողովրդի ուժերը:

Այդ ծանր պահին ժողովրդի և հայրենիքի ճակատագրի պատասխանատվությունն իր վրա վերցրեց Երևանի ազգային խորհրդի նախագահ Արամ Մանուկյանը: Նրա հմուտ ղեկավարության շնորհիվ Սարդարապատում գտնվող հայկական զորքերը ժամանակին ապահովվեցին զինամթերքով, սննդով, ջրով: Ա. Մանուկյանի կոչով բազմաթիվ կամավորաշխարհազորայիններ շտապեցին Սարդարապատ:

Անսպասելի էր նաև հայկական ուժերի հրամանատար, գեներալ Նազարբեկյանի սթափվելը: Եթե նա, մինչ այդ, Հայոց ազգային խորհրդի ղեկավարների լուռ համաձայնությամբ և վրացի գեներալ Օդիշելիձեի հրամանով, առանց որևէ լուրջ դիմադրություն ցույց տալու, թուրքերին էր հանձնել Արևմտյան Հայաստանի կարևորագույն քաղաքներն ու ամրոցները, ապա այժմ սթափվել էր, զգում էր իր պատասխանատվությունը:

Եվ դա հսկայական դեր խաղաց, որպեսզի նա դրսևորի իր ամբողջ ռազմական տաղանդը: Մենք այժմ տեսնում ենք գեներալ Նազարբեկովի ռազմական տաղանդի և հարազատ ժողովրդի ճակատագրի նկատմամբ դրսևորած պատասխանատվության ամբողջ հմայքը:

Գեներալ Նազարբեկյանին հաջողվեց համախմբել բոլոր հայրենասեր հայ սպաներին ու զինվորներին և իր օրինակով ոգևորել նրանց ու ժողովրդին:

Գեներալ Նազարբեկովը, կռահելով թուրքերի մտադրությունը, վերադասավորել էր ունեցած ուժերը, որոնք, ճիշտ է, մեծաքանակ չէին, բայց խելացի ռազմավարության դեպքում կարող էին ապահովել հաջողություն:

Հակառակորդին պետք է ջախջախել առանձին-առանձին և, որ ամենակարևորն է՝ զրկել նրան իր ուժերը միավորելու հնարավորությունից:

Ահա, գեներալ Նազարբեկովի ստրատեգիայի հիմնական միջուկը: Եվ ունեցած ուժերն էլ նա դասավորել է դրան համապատասխան:

1. Սարդարապատի ճակատամարտի պլանը մշակեցին Առաջին հայկական կորպուսի երկրորդ դիվիզիայի հրամանատար, գեներալ Մովսես Սիլիկյանը և շտաբի պետ Ալեքսանդր Վեքիլյանը:

Սարդարապատի խմբավորման հրամանատար կարգվեց գնդապետ Դանիել Բեկ Փիրումյանը: Այդ խմբավորման կազմում էին 5-րդ հրածգային գունդը և կամավորական աշխարհազորային ջոկատները՝ գնդապետ Պողոս Բեկի հրամանատարությամբ, գնդապետ Պերեկրեստովի ղեկավարած պարտիզանական հետևակային գունդը, Իգդիրյան հետևակային գունդը, Զեյթունյան հեծյալ գունդը՝ Սալիբեկյանի գլխավորությամբ:

2. Ալեքսանդրապոլ-Բաշապարան գծով շարժվող թուրքական զորամասերի դեմ կենտրոնացվել է գնդապետ Դոլուխանյանի հրամանատարությամբ գործող 6-րդ գունդը, որի զինվորների մեծ մասը ապարանցի էին, գնդապետ Զալինյանի պարտիզանական հեծյալ գունդը, գնդապետ Սիլինի սահմանապահ գումարտակը և Ջհանգիր աղայի 1.500 մարտիկից կազմված հեծելազորը:

Այս զորախումբը, որը համալրվեց Ապարանի շրջանում կազմավորված կամավորական ջոկատներով, առաջադրանք ուներ թուրքերին թույլ չտալ գրավել Ապարանը և շարժվել Երևանի ուղղությամբ:

3. Համամլու-Ղարաքիլիսա ուղղությամբ շարժվող թուրքերին զրկել Դիլիջանը գրավելու և դեպի Լոռի շարժվելու հնարավորությունից: Այս խնդիրն իրականացնելու էին Անդրանիկը, որը դիրքավորվել էր Լոռիում և Դիլիջանում գտնվող զորաջոկատները:

Կարծում եմ անհրաժեշտություն չկա այստեղ հանգամանորեն շարադրել Սարդարապատի, Ապարանի և Ղարաքիլիսայի հաղթական ճակատամարտերի ընթացքը, որի մասին ստեղծվել է ծավալուն գրականություն: Միայն հարկ եմ համարում նշել մեկ-երկու կարևոր հանգամանք:

Նախ, Սարդարապատի ուղղությամբ հարձակվող թուրքական զորամասը բաղկացած էր 4500-5000 զինվորից: Ուներ հրետանու 4 մարտկոց՝ 40 հրանոթով:

1918 թ. մայիսի 21-ին, թուրքական զորքերն Ալեքսանդրապոլը գրավելուց 6 օր անց, առանց որևէ լուրջ դիմադրության հասան Սարդարապատ:

Նախապես մշակված ծրագրի համաձայն գեներալ Սիլիկյանը հարձակման հրաման տվեց, և մայիսի 22-ին թուրքերը դուրս շպրտվեցին Սարդարապատ գյուղից: Այս հարվածն այնքան անսպասելի էր, որ թուրքական զորամասն, ուշքի չգալով, սկսեց անկազմակերպ նահանջել:

Սիլիկյանը կարո՞ղ էր միայն աշխարհազորային ջոկատների միջոցով հաղթել թուրքական կանոնավոր, մարտերում կոփված և լավ զինված զորքին:

Իհարկե, ոչ: Ես այս հարցադրումը կատարում եմ, որպեսզի ընթերցողի ուշադրությունը բևեռեմ տասնամյակներ շարունակ շրջանառության մեջ դրված այն թյուր մտայնության վրա, որի համաձայն Սարդարապատի հաղթանակը տարել է ժողովուրդը, այն էլ՝ զինված փոցխով ու գերանդիով:

Իրականում մինչև ատամները զինված բանակը չի կարող պարտվել անզեն ժողովրդից: Վերջապես անզեն ժողովուրդը չի կարող շահել ոչ մի ճակատամարտ:

Իհարկե, ոգևորությունը լավ բան է, բայց դա իր չափն ունի, երևակայությունն էլ սահման ունի:

Ապարանի ճակատամարտում թուրք զավթիչների դեմ տարած հաղթանակի գործում մեծ դեր է ունեցել ռուսական բանակում ծառայած գնդապետ Դոլուխանյանը, որը մշակել և ղեկավարել է մարտական գործողությունները: Նրա մարտական օգնականներն էին աշխարհազորայինների հրամանատարներ Սեդրակ Զալալյանը և Արսեն Տեր-Պողոսյանը՝ հայտնի Խենթի որդին և Ջհանգիր աղան:

Առհասարակ, Ղարաքիլիսայի ճակատամարտի մասին ծավալուն պաշտոնական տեղեկություններ քիչ են պահպանվել: Դրա փոխարեն ստեղծվել է հուշերի վրա հիմնված գրականություն, որն, ինչպես հայտնի է, մեծամասամբ կրում է սուբյեկտիվ բնույթ:

Դրանց հեղինակների մի մասն առաջ է մղում իր դերակատարումը, մի մասն էլ, ելնելով կուսակցական կորպորատիվ շահերից, կարևոր դեր է հատկացնում իրենց կուսակիցներին, նրանց վերագրելով հաղթանակներ ձեռք բերելու դափնեպսակը:

Այս առումով հատկապես աչքի են ընկնում դաշնակցությանը պատկանող կամ էլ նրան հարող հեղինակները, որոնք, օրինակ, Դրոյին համարում են Ապարանի ճակատամարտում հաղթանակի կերտող, իսկ Նժդեհին դարձնում Ղարաքիլիսայի հաղթանակի կազմակերպիչ:

Բայց այդ հեղինակները լռության են մատնում այն իրողությունը, թե ինչու Ղարաքիլիսայի ճակատամարտում տարած հաղթանակից հետո քաղաքը հանձնվել է թուրք զավթիչներին, որոնք երեք օր շարունակ զբաղվել են թալանով ու բնակիչներին ոչնչացնելով: Ղարաքիլիսայի ճակատամարտում ձեռք բերված հաղթանակը չհաջողվեց ամրապնդել: Լռության են մատնում նաև Ղարաքիլիսան թուրքերին հանձնելու հեղինակներին, բայց դրա փոխարեն նրանց ներկայացնում հաղթողի լուսապսակով:

Հարկ եմ համարում կրկնել, որ Սարդարապատի, Ապարանի և Ղարաքիլիսայի ճակատամարտերում թուրքական զինված ուժի դեմ հանդես է եկել հայկական զինված ուժը, հայկական բանակը՝ նախապես մշակված ծրագրով ու հմուտ հրամանատարությամբ:

Այդ ճակատամարտերում բախվել է երկու ռազմական ուժ: Դրանցից մեկը գերմանական ռազմական դպրոցն անցած թուրք հրամանատարների գլխավորությամբ գործող թուրքական զորքն էր: Մյուսը՝ ռուսական ռազմական դպրոցն անցած հայ հրամանատարների գլխավորած հայկական զորքը:

Եվ հաղթանակը ձեռք է բերվել հայ հրամանատարների հմուտ գործողությունների ու հայ զինվորների հերոսական կամքի շնորհիվ:

Ես այս հանգամանքը հատկապես եմ ընդգծում, քանի որ քիչ չեն այն հեղինակները, որոնք մայիսյան հաղթանակներին տալիս են տարրերային բնույթ, դրանով նսեմացնելով կամ էլ անտեսելով հայ հրամանատարների և հայ զինվորի ռազմական հմտությունը:

Ովքե՞ր էին այդ հայ զինվորներն ու սպաները, որոնք միավորվել էին կանոնավոր զորաջոկատների մեջ: Նրանք այն զինվորներն ու սպաներն էին, որոնք ամբողջ հոգով զգացել էին Էրզրումի, Սարիղամիշի, Կարսի ու Ալեքսանդրապոլի կորուստը, ապրել էին պարտությունների ու նահանջի դառնությունը:

Եվ ինչպե՞ս պատահեց, որ այդ դաժան փորձություններով անցած հայ հրամանատարն ու զինվորն իրենց մեջ ուժ են գտել ոչ միայն ուշքի գալու, այլև պարտության մատնելու իրենցից ավելի զորեղ թուրքական բանակին:

Այս հարցի պատասխանն անշուշտ, ձեռնտու չէ բոլոր նրանց համար, ովքեր հորինել են մայիսյան հաղթանակներն իրենց վերագրելու առասպելը:

Ուրեմն, ինչո՞ւ վերոհիշյալ ճակատամարտերում պարտված հայկական բանակը 1918թ. գարնանը հաղթանակ տարավ:

Այդ հաղթանակը սխրանք էր հանուն հայրենիքի փրկության:

Այդ հաղթանակը միայն հաղթանակ չէր թուրքական զավթիչների դեմ:

Դա հաղթանակ էր ազգային դավաճանության դեմ:

Դա հաղթանակ էր պոռոտախոսության և երդվյալ թշնամու առջև ստորաքարշության դեմ:

Այսօրվա երիտասարդ սերնդին շատ քիչ բան է հայտնի 1918 թ. օրհասական վիճակի մասին: Նրա համար պարզ չէ, թե ինչու է թուրքական զավթիչներին հաջողվել հասնել մինչև Երևանի մատույցներ: Պարզ չէ նաև, թե ինչն է նպաստել Սարդարապատի, Ապարանի ու Ղարաքիլիսայի հաղթանակին:

Նշված ժամանակաշրջանում հայ ժողովրդի գործերի տնօրինումն իր վրա էր վերցրել դաշնակցության գործիչներից կազմված Հայոց ազգային խորհուրդը՝ հայտնի գրող Ավետիս Ահարոնյանի գլխավորությամբ:

Իսկ ինչպե՞ս էր տնօրինում կամ ինչպե՞ս էր իր պարտականությունները կատարում Հայոց ազգային խորհուրդը: Ինչպե՞ս էր Թիֆլիսում նստած ղեկավարում Հայաստանի և նաև ռազմաճակատի գործերը:

Փորձեմ շատ համառոտ պատասխանել այս հարցերին:

Հայոց ազգային խորհուրդը լռությամբ համաձայնվել էր, որպեսզի թուրքական զավթիչների դեմ ռազմաճակատում կռվող հայկական զորամասերը գտնվեին իր հայատյացությամբ հայտնի վրացի գեներալ Օդիշելիձեի հրամանատարության տակ:

Ավելին, ազգային խորհուրդը դարձել էր այդ գեներալի հակահայկական հրամանների հլու կամակատար:

Եվ այդ ամենի հետևանքով, ազգային խորհուրդն առանց ցավի ու խղճի, համաձայնվել է առանց որևէ դիմադրության թուրքերին հանձնել Էրզրումը, Սարիղամիշն ու Կարսը:

Արևմտահայությունը, որը երբեք չէր հաշտվել թուրքական բռնակալության լծին և մշտապես պայքարում էր նրա դեմ, այդ ինչպե՞ս պատահեց, որ առանց կռվի թուրքերին հանձնեց վերոհիշյալ քաղաքները և բռնեց նահանջի ու գաղթի ճանապարհը:

Ո՞վ էր արևմտահայությանը դրել այդպիսի ծանր վիճակի մեջ: Այս հարցի պատասխանն ունի մի հասցեատեր՝ դաշնակցության կողմից ղեկավարվող Հայոց ազգային խորհուրդը, որը փաստորեն միայն անունով էր ազգային:

Ազգային խորհուրդը լռությամբ համաձայնվել է վերոհիշյալ քաղաքների հանձնմանը, որով էլ, ինչպես հայկական զորամասերին, այնպես էլ արևմտահայությանը նետել է հուսահատության գիրկը, ստեղծելով խուճապ, անկազմակերպվածություն ու խառնաշփոթ:

Էրզրումը, Սարիղամիշն ու Կարսը թուրքական զավթիչներին հանձնվել է բացահայտ դավաճանությամբ: Դրա հետևանքով էր, որ 1918 թ. մայիսի 15-ին Ալեքսանդրապոլը նույնպես առանց դիմադրության հանձնվեց թուրքերին:

Սակայն, 1918 թ. մայիսի 15-ից հետո, իրադարձությունն այլ զարգացում ստացան:

Բաթումում թուրքերի հետ սիրախաղով զբաղված Հայոց ազգային խորհրդի դաշնակցական անդամները, բարեբախտաբար, հնարավորություն չունեցան խառնվելու Հայաստանում զարգացող իրադարձություններին: Նրանց ձեռքերը Հայաստան չէին հասնում:

Եվ վերոհիշյալը հաշվի առնելով, դժվար չէ պատկերացնել, թե ինչ կլիներ Հայաստանի և հայ ժողովրդի վիճակը, եթե հանկարծ Բաթումի պայմանագիրը ստորագրվեր մինչև Սարդարապատի, Ապարանի ու Ղարաքիլիսայի հաղթանակը:

Էրզրումը, Սարիղամիշը, Կարսն ու Ալեքսանդրապոլը թուրք զավթիչներին հանձնողները չէին խորշի նաև Երևանն ու ամբողջ Արևելյան Հայաստանը թուրք զավթիչների ոտքերի տակ նետել: Այդպես կլիներ, որովհետև ով մեկ անգամ ուրանում է, ուրանալու է նաև շատ անգամ:

Բարեբախտաբար դա տեղի չի ունեցել:

Պատմության թելադրանքով ազգային դավաճանների ձեռքը Երևանին չի հասել: Ճիշտ է, Երևանին նրանց ձեռքը չի հասել, բայց ստորագրելով Բաթումի պայմանագիրը, Սարդարապատի, Ապարանի, Ղարաքիլիսայի հաղթանակները ոչնչի հավասարեցրին և հնարավորություն տվեցին, որպեսզի թուրքական հրանոթներն Ռելուխանլու կայարանից ուղղվեին Երևանի վրա:

Նշելով 1918թ. մայիսյան հաղթանակների 99-րդ ամյակը, մենք հպարտությամբ ու երախտագիտությամբ հիշում ենք այդ հաղթանակի կազմակերպիչներ հայ սպաների ու զինվորների, աշխարհազորայինների սխրանքը:

Բայց միաժամանակ այսօր էլ հրատապ է մնում այն հարցը, թե ինչու մայիսյան հաղթանակները Բաթումի պայմանագրով ոչնչի հավասարվեցին, և ովքեր են դրա համար պատասխանատու:

Վլադիմիր ՊԵՏՐՈՍՅԱՆ
Պատմական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

ՀՀ ԳԱԱ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ

Ներկայացնում է ՀՀ ԳԱԱ սփյուռքի բաժինը

ԱՐԱ ԲԱԶՅԱՆ

Կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Արա Բազյանը ծնվել է 1948 թ. հունվարի 22-ին Երևանում, մտավորականների ընտանիքում: Հայրը՝ Սահակ Բազյանը, եղել է Երևանի պետական համալսարանի պրոֆեսոր, մասնագիտությամբ՝ գրականագետ, մայրը՝ Երանուհի Գրիգորյանը, բժշկուհի էր: Բազյանների ընտանիքում միշտ կարևորվել է սերը առ գիտություն, և Արա Բազյանը մեծացել է այդ մթնոլորտում:

Ա. Բազյանը հաճախել է Երևանի սրտում գործող թիվ 58 ութամյա դպրոցը, այնուհետև սովորել Շևչենկոյի անվան դպրոցում: Սովորելու տարիներին նա աչքի էր ընկնում հատկապես ֆիզիկայի և մաթեմատիկական գիտելիքներով: Սիրում էր կարդալ ֆիզիկոսների կենսագրությունները «Жизнь замечательных людей» մատենաշարում՝ էյնշտեյն, Ռեզերֆորդ և այլն: Այդ տարիներին Արա Բազյանը կարծում էր, թե գտել է իր մասնագիտությունը և ցանկանում էր ընդունվել Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետ: Սակայն հենց այդ ժամանակ նրան հետաքրքրեց հատկապես ֆիզիկոսների օժտվածության և տաղանդի հարցը: Այդ ինչպե՞ս է պատահում, որ մի մարդ տաղանդավոր է ծնվում, մյուսը՝ ոչ այնքան, ինչի՞ց է դա կախված: Եվ Բազյանը որոշեց, որ իր ապագան պետք է կապի կենսաֆիզիկայի հետ՝ ուսումնասիրելու մարդու ուղեղի ֆունկցիաները:

1966 թ. նա ընդունվեց Երևանի պետական համալսարանի կենսաբանական ֆակուլտետ, կենսաֆիզիկա մասնագիտությամբ: Գերազանցիկ ուսանողին 4-րդ կուրսից ուղարկեցին Մոսկվայի պետական համալսարան՝ շարունակելու կրթությունը և պատրաստելու ավարտական աշխատանքը: Այդ տարիների մշակումները և հավաքած նյութերը հետագայում դարձան նրա թեկնածուական ատենախոսության հիմքը: 1977 թ. Արա Բազյանը Մոսկվայում պաշտպանեց իր գիտական ատենախոսությունը, Ռ. Ի. Կռուգլիկովի ղեկավարությամբ: Ատենախոսության թեման էր «Н13-լեյցինի՝ գլխուղեղի սպիտակուցների մեջ ներառման աուտոռադիոգրաֆիկ ուսումնասիրությունն ուսուցումից հետո»: Նրա նպատակն էր հասկանալ, թե ինչպես է աշխատում մարդու ուղեղը: Նա գտնում էր, որ ֆիզիկապես բոլոր մարդկանց ուղեղը նույնն է:

Թեկնածուական ատենախոսությունն ավարտելուց հետո Բազյանը եկավ այն եզրակացության, որ այդպես աշխատել չի կարելի, անընդհատ անհրաժեշտ էր հաշվել, թե որ բջջի մեջ որքան սպիտակուց է ավելացել կամ պակասել, որն էլ խթանում է տաղանդի ձևավորմանը: Բազյանը առավել հակված էր աշխատելու գլխուղեղի գործունեության միացյալ հայեցակարգի շրջանակում, որի զարգացման վրա մեծապես ազդում է մարդու հուզական համակարգը: Սպիտակուցների լավագույն սինթեզն է ապահովում մարդկանց տաղանդավոր լինելու կամ չլինելու հարցը:

Տարիների փորձի և բազմաթիվ փորձարկումների ու հավաքած նյութերի հիման վրա 1988 թ. Արա Բազյանը պաշտպանեց դոկտորական ատենախոսությունը՝ «Աուտոադրենոռեցեպտորների ֆիզիոլոգիական դերը»:

Բազյանի գիտական ղեկավար Ռոման Կռուգլիկովը, որը Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի բարձրագույն նյարդային գործունեության և նեյրոֆիզիոլոգիայի ինստիտուտի ուսման և հիշողության նեյրոքիմիական մեխանիզմների լաբորատորիայի վարիչն էր, կյանքի վերջին տարիներին առաջարկեց Արա Բազյանին մտածել իրեն փոխարինելու մասին: 1995 թ.-ից մինչև այսօր Արա Բազյանը գլխավորում է Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի բարձրագույն նյարդային գործունեության և նեյրոֆիզիոլոգիայի ինստիտուտի ուսուցման և հիշողության նեյրոքիմիական մեխանիզմների լաբորատորիան:

Նա արտոնագրի, «Աուտոադրենոռեցեպտորների ֆիզիոլոգիական դերը» վերնագրով մենագրության, 187 գիտական հոդվածների հեղինակ է: Այս տարիներին նա ղեկավարել է 12 ասպիրանտի և մեկ դոկտորանտի:

Ողջ այս ընթացքում նա չի դադարել համագործակցել Հայաստանի գիտնականների հետ. բավական ակտիվ համագործակցում է ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի աշխատակիցների, մասնավորապես՝ Հակոբ Դևեջյանի հետ: Համագործակցում է նաև Լ. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի աշխատակիցների հետ, կապեր կան նաև ԵՊՀ կենսաֆիզիկայի ամբիոնի հետ: Նա բավական հաճախ հանդես է գալիս ընդդիմախոսություններով կամ կարծիքներով՝ Հայաստանում պաշտպանվող ատենախոսությունների վերաբերյալ: Բազյանը բավական հաճախ դասախոսությունների շարք է անցկացնում Հայաստանում՝ Ռուս-հայկական համալսարանում, ինչպես նաև Երևանի պետական համալսարանում:

Հաշվի առնելով Արա Բազյանի գիտական և մանկավարժական մեծ ավանդը, ինչպես նաև սերտ կապերը մայր հայրենիքի հետ, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան 2014 թվականին նրան ընտրել է ԳԱԱ արտասահմանյան անդամ: Այսօր էլ Բազյանը իր ուժերի ներածին չափով աշխատում է մասնագիտական իր գիտելիքներով ու փորձով օգտակար լինել իր հայրենակիցներին:

Գոհար ԻԱԿԱՆԴԱՐՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ԳԱԱ սփյուռքի բաժնի գիտքարտուղար

ՀՀ ԳԱԱ բուսաբանության ինստիտուտն անվանակոչվեց աշխարհահռչակ բուսաբան Արմեն Թախտաջյանի անունով

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի բուսաբանության ինստիտուտն այսուհետ կրելու է 20-րդ դարի խոշորագույն բուսաբան-էվոլյուցիոնիստ, գիտության վաստակավոր գործիչ Արմեն Թախտաջյանի անունը: Այս որոշումը ՀՀ կառավարությունն ընդունեց սույն թվականի մայիսի 4-ին:

Արմեն Թախտաջյանը Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի և Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս էր, ԱՄՆ-ի ԳԱ, Լոնդոնի Լինեյան ընկերության, Գերմանիայի Լեոպոլդինի անվան բնագետների, Լեհաստանի և Նորվեգիայի ակադեմիաների իսկական անդամ:

Նա ԽՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր էր, Սոցիալիստական աշխատանքի հերոս: Պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի, ժողովուրդների բարեկամության շքանշաններով, «Անձնվեր աշխատանքի համար» և ՀՀ ԳԱԱ «Ոսկե» մեդալներով, Վ. Կոմարովի և Ռ. Ալերտոնի անվան մրցանակներով:

Արմեն Թախտաջյանի կողմից ստեղծված բուսական աշխարհի էվոլյուցիոն համակարգը ոչ միայն ընդունված է գիտական բուսաբանական հասարակության կողմից, այլ նաև համարվում է լավագույնը և ամենաարժանահավատը: Արմեն Թախտաջյանը մեծ ներդրում է ունեցել Հայաստանում բուսաբանական գիտության զարգացման գործում: Նրա շնորհիվ հայաստանյան բուսաբանական դպրոցը համարվում է առաջադեմ դպրոցներից մեկն աշխարհում:

Մեծանուն գիտնականի աջակցությամբ Հայաստանում զարգացել են բուսաբանական աշխարհի ժամանակակից գիտության այնպիսի ուղղություններ, ինչպիսիք են սիստեմատիկան, պալինոլոգիան, կարիոլոգիան:

ՀՀ ԳԱԱ բուսաբանական այգում հիմնվեց Բարեկամության պուրակ

ՀՀ ԳԱԱ բուսաբանական այգում ապրիլի 29-ին հիմնվեց Բարեկամության պուրակ: Մեկ հա տարածքում լայնատերև և ասեղնատերև տեսակի 300 ծառ տնկեցին ՀՀ ԳԱԱ բուսաբանության ինստիտուտի հյուրերն ու աշխատակիցները: Միջոցառմանը մասնակցում էին Հայաստանում Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Մաթիաս Քիսլերն ընտանիքի հետ, Բելառուսի արտակարգ և լիազոր դեսպան Իգոր Նազարուկը, ՀՀ ԳԱԱ գիտական կառույցների, ՀՀ նախարարությունների, միջազգային կազմակերպությունների, ԲՈՒՀ-երի, հասարակական կազմակերպությունների, լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

Հյուրերին ողջունեց ՀՀ ԳԱԱ բուսաբանության ինստիտուտի տնօրեն ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ժիրայր Վարդանյանը: Ներկայացնելով ինստիտուտի գործունեությունը՝ Ժիրայր Վարդանյանը մասնավորապես ասաց. «Մենք ակտիվացրել ենք մեր միջազգային համագործակցությունը աշխարհի շատ բուսաբանական այգիների հետ և դրա արդյունքում կարողացանք բավականին նվաճումներ ունենալ բուսաբանական այգու առանձին ուղղությունների վերաբերյալ: Ստեղծել ենք թանգարան, ստեղծել ենք սերմերի բանկ: Նաև ինստիտուտի առաջադեմ գիտնականների նախաձեռնությամբ ստեղծվեց «Աջակցություն բուսաբանական այգուն» բարեգործական հիմնադրամ: Սա առաջին միջոցառումն է, որ հիմնադրամը կազմակերպել է»:

ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ռուբեն Հարությունյանը պատմեց բուսաբանական այգու ստեղծման մասին և այդ գործում այն մեծ ներդրման մասին, որն ունեցել է աշխարհահռչակ գիտնական, բուսաբան ակադեմիկոս Արմեն Թախտաջյանը: Նա հայտարարեց, որ ՀՀ ԳԱԱ բուսաբանության ինստիտուտը, որի կազմում է բուսաբանական այգին, կանվանակոչվի Արմեն Թախտաջյանի անունով:

WWF-Հայաստանի տնօրեն, «Աջակցություն բուսաբանական այգուն» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ Կարեն Մանվելյանը նշեց, որ կարևոր է բուսաբանական այգու՝ որպես կրթության, հետազոտությունների, բույսերի պահպանության կենտրոն պահպանելը: «Բուսաբանական այգին հաջողությամբ համագործակցում է աշխարհի տարբեր այգիների հետ, և հուսով ենք, որ մեր ներքին և արտաքին համագործակցությամբ կհասնենք այգու և հիմնադրամի առջև դրված նպատակների իրականացմանը»,- ասաց Կարեն Մանվելյանը:

«Աջակցություն բուսաբանական այգուն» բարեգործական հիմնադրամի տնօրեն Սարգիս Աղայանը նշեց, որ հիմնադրամի նպատակն է աջակցել բուսաբանական այգու կենսաբազմազանության կայուն պահպանմանը: «Ինձ համար ամենակարևորն է տեսնել, որ բուսաբանական այգին ամենից շատ այցելություն ունեցող վայրն է Հայաստանում: Այդ նպատակի համար մենք ունենք մի շարք անելիքներ»,- ասաց Սարգիս Աղայանը:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ. ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՅԱՑԱԾ ԱՐԴԻԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ Է ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԼԻԻՐԱՎ ԱՆԴԱՄ

(Մտորումներ Հայաստանի անկախության 25-ամյակի առթիվ)

(Սկիզբը՝ N 2 և N 4-ում)

Հայաստանը ռազմական համագործակցություն է հաստատել նաև Արևմտյան երկրների հետ, ինչպես Հունաստանը, ԱՄՆ-ը և այլ երկրներ: Նա համագործակցում է նաև ՆԱՏՕ-ի հետ, որի սկիզբը դրվեց 2002 թ., երբ Հայաստանն անդամակցեց Հյուսիսատլանտյան համագործակցության խորհրդին: Հաջորդ քայլը կատարվեց 1994 թ.՝ Հայաստանը միացավ «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրին: Այդ ծրագրի շրջանակներում հայկական զինված ուժերը մասնակցում են ՆԱՏՕ-ի զորավարժություններին, որոնք անցկացվում են ոչ միայն եվրոպական երկրներում, այլև Հայաստանում: ՆԱՏՕ-Հայաստան համագործակցության շրջանակները տարեցտարի ավելի են ընդլայնվում: 2004 թ. Հայաստանը ՆԱՏՕ-ում հաստատեց դիվանագիտական առաքելություն՝ դեսպանի մակարդակով: 2004-2005 թվականներին իրականացվեց Հայաստանի միացումը ՆԱՏՕ-ի «Անհատական գործողությունների» ծրագրին: Ուշագրավ է նաև այն իրողությունը, որ Հայաստանի նախագահներ Լևոն Տեր-Պետրոսյանը 1996 թ., Ռոբերտ Քոչարյանը 2005 թ., իսկ հետագայում Սերժ Սարգսյանը այցելել են ՆԱՏՕ-ի շտաբկայան, բանակցություններ վարել ՆԱՏՕ-ի բարձրագույն ղեկավարության հետ անվտանգության հարցերի շուրջ: Այդ բոլորը ծառայում է Հայաստանի անվտանգության ամրապնդմանը, մի կողմից, և վկայում Հայաստանի ռազմական գործոն լինելու փաստը, մյուս կողմից: Հայկական գործոնի նշանակությունն ավելի ընդգծվեց, երբ հայկական զորախմբերը սկսեցին մասնակցել ՆԱՏՕ-ի խաղաղապահ ուժերի առաքելությանը Կոսովոյում (2004 թ.), Իրաքում (2005 թ), Աֆղանստանում (2010 թ.), Լիբանանում (2014 թ.)՝ փայլուն կերպով դրսևորելով իրենց և արժանանալով ՆԱՏՕ-ի հրամանատարության հիացմունքին:

Այդուհանդերձ, Հայաստանը երբեք չի դրել ՆԱՏՕ-ին անդամակցելու հարցը, ի տարբերություն հարևան Վրաստանի և Ադրբեջանի:

Վերոշարադրյալից հստակ երևում է, որ Հայաստանը երկու կողմերի՝ Արևելքի և Արևմուտքի միջև, այսինքն Ռուսաստանի և ՆԱՏՕ-ի անդամ երկրների միջև, որդեգրել է հավասարակշռված քաղաքականություն, որը ստացավ կոմպլեմենտար՝ փոխլրացման քաղաքականություն անվանումը, ինչը միշտ չէ, որ ճիշտ է հասկացվել թե՛ Հայաստանում, և թե՛ Ռուսաստանում: Այնուամենայնիվ, գտնում ենք, որ դա ճիշտ քաղաքականություն է, որի շնորհիվ ընդլայնվեց Հայաստանի, ԼՂՀ-ի և ողջ հայության անվտանգության դաշտը:

Ինչ վերաբերում է հայկական բանակը տարածաշրջանում ամենամարտունակ բանակը լինելու հայեցակարգին, ապա դա շատ լուրջ փորձության ենթարկվեց 2016 թ. ապրիլի 2-ին սկսված քառօրյա պատերազմի ժամանակ, որ սանձազերծեց Ադրբեջանը ԼՂՀ-ի դեմ՝ նպատակ ունենալով զենքով հօգուտ իրեն լուծել Ղարաբաղյան հիմնախնդիրը: Ադրբեջանական տխրահռչակ բլիցկրիգը խայտառակորեն տապալվեց և փշրվեց դեմ առնելով հայկական անսասան ժայռին: Քառօրյա պատերազմը կրկին հաստատեց Հայկական բանակի տարածաշրջանում ամենամարտունակը լինելու իրողությունը: Դա ոչ միայն հայերի կարծիքն է, այլև օտարերկրյա պրոֆեսիոնալ ռազմական մասնագետների տեսակետն է:

Այսպիսով, կարող ենք ասել, որ վերոնշյալ փաստերը, Հայաստանի ռազմական համագործակցությունը արևելյան և արևմտյան երկրների հետ, հայ-ադրբեջանական երկու պատերազմներում հայկական կողմի տարած հաղթանակները, գալիս են հաստատելու, որ Հայաստանը՝ որպես պետություն, իրոք, ռազմական գործոն է, որը չի կարելի անտեսել:

4. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԱՄԱՅՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Այսօր շրջանառության մեջ է «Եռյակի» վերաբերյալ բանաձևը, որի բացադրիչներն են Հայաստանի Հանրապետությունը, Արցախը և Հայ սփյուռքը: Սակայն նրանց միջև կարևորության և դերակատարման առումով չի կարելի հավասարության նշան դնել: Գլխավոր դերակատարը, հիմքերի հիմքը, Հայաստանն է, որին պատմականորեն վիճակված է առաջատարի դերակատարում: Նա Ամենայն Հայոց Պետությունն է: Գտնում ենք, որ «Հայաստանի Հանրապետություն» անվանակոչման հետ և նրան զուգահեռ կարելի է և պետք է օգտագործել «Ամենայն Հայոց Պետություն» անվանակոչումը, մանավանդ, որ հայ իրականության մեջ այդ եզրը տարբեր կապակցություններով ընդունված է և օգտագործվում է, ինչպես, «Ամենայն Հայոց Կաթողիկոս», «Ամենայն Հայոց Բանաստեղծ» և այլն: Առանց Հայաստանի՝ որպես պետականության, միջազգային և ռազմական գործոնի գոյության, չէր լինի ԼՂՀ-ն, չէին լինի այն պատմական նվաճումները և հաղթանակները, որ ձեռք են բերվել վերջին քառորդ դարում: Չմոռանանք նաև, որ ղարաբաղյան շարժումը, որն այնուհետև վերածվեց համահայկական շարժման, սկսվել և ընթացել է «Միացո՛ւմ» պահանջի ներքո և դեռևս ուժի մեջ է 1989 թ. դեկտեմբերի 1-ի Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և ԼՂԻՄ-ի Ազգային խորհրդի որոշում-հռչակագիրը՝ նրանց վերամիավորման մասին: Եվ վերջ ի վերջո, վաղ թե ուշ, դա տեղի է ունենալու:

Իսկ մինչ այդ, Հայաստանը պետք է շարունակի ԼՂՀ-ի պաշտպանությունը և նրան օգնելու իր ազգային-պատմական առաքելությունը՝ որպես Ամենայն Հայոց Պետություն:

Հայոց պետության կայացումը, նրա ռազմական գործոն և միջազգային հանրության լիիրավ անդամ դառնալը, վճռական նշանակություն ունեցավ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործում: Եթե մինչև Հայաստանի անկախացումը ցեղասպանությունը ճանաչել էին ընդամենը երեք պետություն՝ Ուրուգվայը, Կիպրոսը և Հունաստանը, ապա անկախացումից հետո սկսվեց մի գործընթաց, որը կարելի է անվանել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հաղթարշավ: Անկախության շրջանում Հայոց ցեղասպանությունը ճանաչել են 23 պետություն, իսկ ընդամենը՝ 26 պետություն Եվրոպայում, Հյուսիսային և Հարավային Ամերիկայում և Ասիայում, Ավստրալիայի, Բրազիլիայի, Կանադայի, Իսպանիայի, Իտալիայի, Մեծ Բրիտանիայի և Շվեյցարիայի կազմի մեջ մտնող 16 ինքնավար կազմավորումներ ԱՄՆ-ի 50 նահանգներից ՝ 43-ը;

Ինչ վերաբերում է երրորդ բաղադրիչին՝ Հայ սփյուռքին, ապա դա «Եռյակի» ամենախոցելի հատվածն է: Դժվարությունը կայանում է նրանում, որ հստակ չէ, թե ում հետ պետք է համագործակցի Հայաստանը, քանի որ համասփյուռքյան կառույցներ գոյություն չունեն, և կոնկրետություն չկա, թե ով ինչ է ուզում:

Հայտնի է, որ աշխարհասփյուռ հայությունը թվաքանակով ավելի շատ է, քան թե Հայաստանի և Արցախի հայությունը միասին վերցրած, և նա ունի զգալի ներուժ, որը լրիվ չի օգտագործվում ի շահ համայն հայության: Սակայն Ամենայն Հայոց Պետությունը պետք է շարունակի իր օգնությունը Սփյուռքին, հատկապես հայապահպանության ոլորտում, գտնի ինտեգրացման նոր և ինքնատիպ ձևեր, սփյուռքահայը Հայաստանը Արցախի հետ միասին համարի իր Հայրենիքը, իր «Էրգիրը», իսկ իրեն նրա քաղաքացի, բայց ոչ երբեք զբոսաշրջիկ, և իրեն պատասխանատու համարի հայրենյաց բոլոր հարցերի համար, հնարավորինս գործունյա մասնակցություն ունենա նրանց խնդիրների լուծման գործում:

Կարծում ենք, սխալ կլիներ ենթադրել, թե ոչինչ չի արվում: Արվում է, որոշ բնագավառներում անգամ շատ բան: Այդ առումով պետք է ընդգծել այն մեծ օգնությունը, որ վերջին տարիներին Հայաստանը ցուցաբերում է Իրաքից և հատկապես Սիրիայից ներգաղթածների համար, և աններելի սխալ է նրանց փախստական կոչելը, քանի որ հայը Հայաստան վերադառնալիս, անկախ այն բանից, թե ինչպես է եկել, միևնույն է, նա իր պապենական տունն է գալիս: Իսկ դրանից ավելի քաղցր բան չկա:

Ի մի բերելով քննարկման արդյունքները, կարելի է ասել. Հայաստանի Հանրապետությունը իր գոյության քսանհինգ տարիների ընթացքում, որը պատմական շատ կարճ ժամանակահատված է, կարողացել է լուծել առանցքային բնույթի շատ խնդիրներ: Հայաստանն այժմ արդեն կայացած արդիական պետություն է ՝ իր սահմանադրությամբ, պետական կառուցվածքով, պետական, քաղաքական և հասարակական մարմիններով, զինված ուժերով՝ ընդունակ ապահովելու իր ժողովրդի ազգային անվտանգությունը:

Հայաստանի Հանրապետությունը, վարելով կոմպլեմենտար քաղաքականություն, անդամակցելով տարբեր միջազգային կազմակերպություններին՝ քաղաքական, ռազմական, տնտեսական, ֆինանսական և այլ բնույթի կառույցներին, դարձել է միջազգային հանրության լիիրավ անդամ և իր արժանի տեղը գրավել արդի վերին աստիճանի բարդ և վտանգներով լի աշխարհում: Հայաստանը որպես կայացած պետություն, միջազգային և տարածաշրջանային ռազմական կարևոր գործոն, վայելելով միջազգային հանրության ճնշող մեծամասնության համակրանքն ու աջակցությունը, դարձել է հուսալի վահան համայն հայության համար, հաջողությամբ կիրառում է «Այլևս երբե՛ք» տեսադրույթը, և միանգամայն արժանի է «Համայն Հայության Պետություն» կոչմանը:

Այո, նա վստահությամբ է նայում ապագային:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան և տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների գործատուների միությունը ստորագրեցին փոխըմբռնման հուշագիր

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան և տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների գործատուների միությունը նոր նախադրյալներ ստեղծեցին տնտեսության բոլոր ճյուղերում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ ինովացիաների զարգացման համար: Սույն թվականի մայիսի 6-ին ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը և Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների գործատուների միության նախագահ Արմեն Բալդրյանը ստորագրեցին փոխըմբռնման հուշագիր:

ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը հայտնեց. «Գիտությունների ազգային ակադեմիան առաջիններից է, որը կապված է եղել տեղեկատվական տեխնոլոգիաների հետ: Տեսական բնույթի հետազոտություններն ընդլայնվելով՝ խիստ կարիք ունեին կիրառական բնույթ ստանալու: Հայաստանում տարբեր երկրների կազմակերպությունները իրականացնում են տեղեկատվական տեխնոլոգիաների հետ կապված ծրագրեր: Այս հուշագրի ստորագրմամբ մենք նպատակ ունենք այդ ծրագրերի իրականացման համար ավելի սերտ համագործակցել և նոր ծրագրեր ստեղծել»:

Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների գործատուների միության նախագահ Արմեն Բալդրյանը նշեց. «Գիտության և մասնավոր հատվածի միջև ստորագրված այս հուշագիրը մեծ ազդեցություն կունենա տնտեսության բոլոր ճյուղերի վրա: Գիտությունների ազգային ակադեմիան և ակադեմիական համակարգը եղել է շատ մեծ դարբնոց կադրերի պատրաստման առումով: Մեզ համար շատ կարևոր է, որ երիտասարդ կադրերն անցնեն ակադեմիական դպրոցը, քանի որ հետազոտողի վարքագիծը ձևավորվում է երիտասարդական տարիներին: Կարևոր է նաև օգտագործել Գիտությունների ազգային ակադեմիայի համակարգի պոտենցիալը»:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՍԱՔԻՄԻԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱԴԻՐԸ

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հ. Խ. Բունիաթյանի ծննդյան 110-ամյակի առթիվ

Լրացավ հայկական կենսաքիմիական դպրոցի հիմնադիր, ականավոր գիտնական ու մանկավարժ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, գիտության վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Հրաչյա Խաչատուրի Բունիաթյանի ծննդյան 110-ամյակը:

Հ. Բունիաթյանը ծնվել է 1907 թ. մայիսի 1-ին Նոր-Բայազետում (այժմ՝ ք. Գավառ): Սկզբնական կրթությունն ստացել է հայրենի քաղաքում: Այնուհետև տեղափոխվել է Երևան, ավարտել է Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցը, Երևանի պետական համալսարանի բժշկական ֆակուլտետը և սկսել է աշխատել որպես կենսաքիմիայի ամբիոնի ասիստենտ: Այնուհետև ղեկավարել է Երևանի անասնաբուծական-անասնաբուժական և ավելի քան երկու տասնամյակ՝ բժշկական ինստիտուտի կենսաքիմիայի ամբիոնը: 1939-ից մինչև 1941 թ. Հ. Բունիաթյանը Երևանի բժշկական ինստիտուտի տնօրենի գիտության գծով տեղակալն էր: 1942-46-ին աշխատել է որպես Երևանի պետական համալսարանի ռեկտոր, օգտագործելով իր ողջ ունակությունները, գիտնականի ու մանկավարժի կազմակերպական տաղանդը այդ ուսումնական հաստատության ամրապնդման և հետագա զարգացման համար: Հայաստանի գիտությունների ակադեմիայի կազմավորման հենց սկզբից նա ընտրվում է ակադեմիայի իսկական անդամ և կենսաբանական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար: Այնուհետև ընտրվում է ակադեմիայի ակադեմիկոս-քարտուղարի և ապա փոխպրեզիդենտի պաշտոններում: 1943 թվականից ակադեմիկոս Հ. Բունիաթյանը միաժամանակ ղեկավարում էր ՀՀ ԳԱԱ Լ. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի կենսաքիմիայի սեկտորը, իսկ 1961-ից մինչև իր կյանքի վերջը նա հանդիսանում էր իր կողմից հիմնադրված ՀՀ ԳԱԱ կենսաքիմիայի ինստիտուտի (որը կրում է նրա անունը) տնօրենը: Կարճատև ժամանակամիջոցում ինստիտուտն աճելով վերածվեց նյարդաքիմիական խոշոր կենտրոնի և լայն ճանաչում ստացավ ոչ միայն Խորհրդային Միությունում, այլև ամբողջ աշխարհում:

Մեր հանրապետությունում նա առաջինը, պրոֆեսոր Հ. Հովհաննիսյանի հետ միասին, ձեռնամուխ եղավ վիտամինների կենսաքիմիայի հետազոտությանը: Այդ աշխատանքներով բացահայտվեց ասկորբինաթթվի հակաօքսիդանտային հատկությունը: Պարզվեց, որ ֆոսֆոր պարունակող մի շարք ճարպանման նյութեր կարող են նպաստել հյուսվածքներում օքսիդացման պրոցեսին և, ընդհակառակը, կանխել այն: Հ. Բունիաթյանը մշակում է օրգանիզմում ասկորբինաթթվի փոխանակության նյարդահումորալ կարգավորման պրոբլեմը: Այդ պրոցեսի նյարդահումորալ և, հատկապես, ռեֆլեկտոր կարգավորման մեխանիզմի պարզաբանումը մեծ չափով նպաստեց օրգանիզմում ընդհանուր նյութափոխանակության և ուղեղի ֆունկցիոնալ կենսաբանության զարգացմանը:

Հ. Բունիաթյանը և նրա աշակերտները ուշագրավ հետազոտություններ են կատարել էներգետիկ և ազոտային փոխանակության կարևորագույն ռեակցիաներում գլխուղեղի ֆիզիոլոգիապես ակտիվ միացություններից մեկի՝ գամմամինոկարագաթթվի և դրա ածանցյալների կենսաքիմիական դերի, ինչպես նաև նյութերի փոխանակության նյարդահումորալ կարգավորման պարզաբանման ուղղությամբ: Առաջին անգամ ցույց տրվեց, որ այդ միացության ազդեցությամբ բարձրանում է բջջային թաղանթների թափանցելիությունը ոչ միայն առանձին իոնների, այլև գլյուկոզայի, ամինաթթուների և մի շարք այլ նյութերի նկատմամբ: Ապացուցվեց, որ այդ միացությունը գլխուղեղից բացի գոյանում է նաև այլ օրգաններում, որը հետագայում իր հաստատումն ստացավ արտասահմանյան հեղինակների աշխատանքներում: Կատարված հետազոտությունների հիման վրա Հ. Բունիաթյանը եկավ այն եզրակացության, որ գամմամինոկարագաթթուն լինելով թաղանթային ակտիվ միացություն, կարևոր ֆունկցիա է կատարում գլխուղեղի, ինչպես նաև ամբողջ օրգանիզմի հոմեոստազում:

Ակադեմիկոս Հ. Բունիաթյանի անմիջական մասնակցությամբ ու ղեկավարությամբ ԳԱԱ կենսաքիմիայի ինստիտուտում ժամանակակից բարձր մակարդակով կատարված աշխատանքները լայն ճանաչում են գտել ինչպես մեր երկրում, այնպես էլ արտասահմանում: Զգալի հաջողություններ են ձեռք բերվել ուղեղի հյուսվածքի կենսաքիմիական մի շարք նուրբ մեխանիզմների բացահայտման և ստացված արդյունքները բժշկության մեջ ներդնելու ուղղությամբ:

Ակադեմիկոս Հ. Բունիաթյանը կարևոր ներդրում ունի մեր հանրապետությունում երիտասարդ գիտական կադրերի պատրաստման գործում և հիրավի հանդիսանում է հայկական կենսաքիմիական դպրոցի հիմնադիրն ու ղեկավարը: Նրա ղեկավարությամբ ավելի քան 60 գիտական աշխատողներ պաշտպանել են թեկնածուական ու դոկտորական թեզեր: Նրա գրչին է պատկանում ավելի քան 250 գիտական աշխատանք ու մենագրություն: Նա կենսաքիմիայի ինստիտուտի կողմից լույս ընծայվող «Ուղեղի կենսաքիմիայի հարցեր» գիտական ժողովածուների խմբագիրն էր: Ռուսաստանի Դաշնության գիտությունների ակադեմիայի և ՀՀ ԳԱԱ «Նեյրոքիմիա» հանդեսի ստեղծումը ակադեմիկոս Հ. Բունիաթյանի և նրա կողմից ղեկավարած կենսաքիմիկոսների ծառայության ակնհայտ գնահատումն էր, որոնք նշանակալի ներդրում ունեն նյարդաքիմիայի մի շարք կարևոր ուղղությունների զարգացման ասպարեզում:

Բեղմնավոր էր նաև ակադեմիկոս Հ. Բունիաթյանի հասարակական գործունեությունը: Երկար տարիներ նա ղեկավարել է հանրապետության ֆիզիոլոգների, կենսաքիմիկոսների և դեղաբանների, այնուհետև կենսաքիմիկոսների ընկերությունները: Նա ակտիվորեն մասնակցել է միջազգային կենսաքիմիական մի շարք կոնգրեսների ու գիտաժողովների աշխատանքներին: Ակադեմիկոս Հ. Բունիաթյանը գիտության նշանավոր կազմակերպիչ էր: Նա աչքի էր ընկնում գիտության տարբեր բնագավառներին և մշակույթին վերաբերող հանրագիտարանային գիտելիքներով, հսկայական աշխատասիրությամբ, որոնք ներդաշնակորեն զուգակցվում էին սկզբունքայնությամբ և պահանջկոտությամբ իրեն և իր աշակերտների նկատմամբ, զգայուն ու հոգատար վերաբերմունքով դեպի գիտական աշխատողները և, հատկապես, երիտասարդները:

Հ. Բունիաթյանը ոչ միայն խոշոր գիտնական էր, այլև հիանալի մանկավարժ: Կենսաքիմիայի վերաբերյալ նրա դասախոսությունները Երևանի պետական համալսարանի, բժշկական և անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտների ուսանողների համար միշտ աչքի էին ընկնում իրենց կուռ շարադրանքով, գիտական տրամաբանությամբ, հետաքրքրությամբ և խորությամբ: Մեր հանրապետությունում աշխատող շատ պրոֆեսորներ, գիտության դոկտորներ ու թեկնածուներ, տարբեր լաբորատորիաների և գիտական հիմնարկությունների ղեկավարներ հանդիսանում են Հ. Բունիաթյանի աշակերտները: Այդ կարևոր հանգամանքը նրան բնութագրում է որպես բազմահմուտ մանկավարժի և գիտնականի: Օժտված լինելով մեծ խորագիտությամբ ու ներքին կուլտուրայով, զուգակցված բացառիկ համեստությամբ, Հ. Բունիաթյանը հիրավի վայելում էր իր աշակերտների ու բարեկամների խոր հարգանքն ու սերը:

Ականավոր գիտնականի ու մանկավարժի, մարդու և քաղաքացու՝ ակադեմիկոս Հրաչյա Խաչատուրի Բունիաթյանի կերպարը վառ օրինակ կարող է ծառայել գիտնականների երիտասարդ սերնդի համար:

Պրոֆեսոր Արմեն ՍԻՄՈՆՅԱՆ
ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, ՀՀ ԳԱԱ Հ. Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտի լաբորատորիայի վարիչ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան և հայ-ռուսական սլավոնական համալսարանը խորացնում են գիտատեխնիկական համագործակցությունը

Սույն թվականի մայիսի 12-ին՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում, քննարկվեցին ՀՀ ԳԱԱ-ի և հայ-ռուսական համալսարանի գիտական, գիտատեխնիկական և տեխնոլոգիական համագործակցության հեռանկարները և առաջնահերթությունները:

ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը, ողջունելով համագործակցության նախաձեռնությունը, ասաց. «Այս համագործակցությունը շատ կարևոր է և դրական արդյունք պետք է ունենա: Նախորդ տարիներից ունենք համատեղ համագործակցության ծրագրեր, որոնց արդյունքները դրական են: Հիմա այդ բոլորին ավելացել է մի նոր հնարավորություն, որը ճիշտ օգտագործելով, կնպաստենք Հայաստանի գիտական մակարդակի և հեղինակության բարձրացմանը»:

Քննարկվեցին տեղեկատվական տեխնոլոգիաների, բժշկական կենսաբանության և կենսատեխնոլոգիաների, ֆիզիկայի և քիմիայի, նանոտեխնոլոգիաների, մեխանիկայի և հնագիտության գիտական բնագավառներում համատեղ հետազոտությունների հնարավորությունները:

Առաջարկություն եղավ համատեղ մագիստրոսական ծրագրեր մշակել բարձրակարգ կադրերի պատրաստման համար:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

Հեռավար մագիստրոսական կրթությունը ներկայացվեց «Կրթություն և կարիերա» էքսպոյին

ՀՀ կրթության և գիտության նախարարության «Կրթական ծրագրերի կենտրոն» ՕԻԳ-ի «Կրթության բարելավում» ծրագրի շրջանակում՝ «Հայաստանի բարձրագույն կրթության նորարարությունների մրցակցային հիմնադրամի» ֆինանսավորմամբ իրականացվող հեռավար ձևաչափով «Գործարար վարչարարություն» մագիստրոսական կրթական ծրագիրը ներկայացվեց «ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՐԻԵՐԱ EXPO 2017» 17-րդ միջազգային մասնագիտացված կրթական ցուցահանդեսին, որի պաշտոնական բացումն ազդարարվեց ապրիլի 26-ին:

Ցուցահանդեսի կարգախոսին համահունչ՝ «Հայտնվի՛ր իրադարձությունների կենտրոնում, ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ և ՀՀ ՊԿԱ համատեղ իրականացվող «Գործարար վարչարարություն» հեռավար մագիստրոսական կրթական ծրագիրը ուշադրության կենտրոնում էր: Այցելուներին մասնավորապես հետաքրքրում էին ընդունելության կարգը, ուսումնառության ձևաչափը, գնահատման համակարգը և այլ հարցեր:

Չորրորդ դարի հայ զորական Մանվել Մամիկոնյանից մինչև «Արաբոյի» Մանվել...

Միշտ էլ վսեմ ու ակնածալից է եղել մեր ժողովրդի, լայն հանրության վերաբերմունքը հայոց ազնվակորով զավակների, արիասիրտ սպարապետների, անձնուրաց զորականների անվան ու հիշատակի հանդեպ: Նրանց հանդեպ մեր ժողովրդի վերաբերմունքը հասնում է ուղղակի և բացահայտ պաշտամունքի:

Հայոց մատենագրության վաղ շրջանի էջերում հանդիպում է մի շատ հուզախառով, զգայացունց պատմական դրվագ, որը կապված է չորրորդ դարի հայ հայրենասեր սպարապետ Մանվել Մամիկոնյանի անվան ու գործունեության հետ: Պատմիչ Փավստոս Բուզանդը սերունդներին է թողել «Պատմություն հայոց» վերնագրով մի շատ արժեքավոր աշխատություն, որն ընդգրկում է հայ ժողովրդի պատմության 4-րդ դարի դեպքերն ու իրադարձությունները (330–ական թվականներից մինչև 387 թվականը՝ մինչև Հայաստանի առաջին բաժանումը Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև): Բուզանդի աշխատությունը հարուստ է բացառիկ արժեքավոր տեղեկություններով: Նա հատուկ ակնածանքով է վերաբերմունք դրսևորում պարսից բռնապետության դեմ ժողովդրի մղած ազգային–ազատագրական պայքարի հանդեպ, մեծարում այդ պայքարի նահատակներին և հերոսներին: Ահա այդպիսի վեհանձն ու արի հայրենասեր է սպարապետ Մանվել Մամիկոնյանը, որը ճակատագրական մի պահի ձգտում է համախմբել իր շուրջը հայրենասիրական բոլոր ուժերին և հակահարված տալ բոլոր զավթիչներին: Այդ ժամանակ Հայաստանում ներքին և արտաքին առումներով ծանր, տագնապալից իրավիճակ էր ստեղծվել: Երկրին սպառնում էր անկախության կորուստ: Մանվել զորականը փորձում էր անել հնարավորն ու անհնարինը՝ վերոնշյալ իրավիճակը փոխելու համար: Մի պահ դա նրան հաջողվում է: Մանվելը 370–ական թվականների կեսերին հաստատվում է Տարոնում և իր վրա վերցնում Մամիկոնյան տոհմի նահապետությունը: Նա կարողանում է երկրից դուրս քշել Վարազդատ թագավորին, որը հայտնի էր իր ապերախտությամբ, բանսարկություններով և ստոր արարքներով: Նրա վտարումից հետո Մանվել Մամիկոնյան սպարապետը հայոց գահին բարձրացնում է Պապի երիտասարդ որդուն՝ Արշակին, իսկ ինքը խնամակալ է դառնում:

Մանվել Մամիկոնյանի խնամակալության շրջանը տևում է յոթ տարի և անցնում է համեմատաբար խաղաղության մեջ: Նա վիթխարի ջանքեր է գործադրում ամրապնդելու հայոց պետության ռազմաքաղաքական հզորությունը, վերացնելու նախարարների, ինչպես նաև արքունիքի և եկեղեցու միջև եղած հակասությունները ու հակամարտությունները: Սակայն որքան էլ նա տաղանդավոր, հայրենատենչ ու անձնուրաց գործիչ լիներ, միևնույնն է, չէր կարող հիմնովին փոխել Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական անկայուն ու մասնատված կացությունը: Նույն պատմիչը՝ Բուզանդը, նշում է, որ Մանվելը «Մեծաւ իմաստութեամբ և բազում յաջողութեամբ աշխարհին Հայոց մեծապէս առաջնորդ էր» և «ուներ զաշխարհն ի շինութիւն»:

Ահա այսպիսին էր IV դարի հայրենասեր, հայրենիքի հանդեպ անսահման սիրով, նվիրումով և հավատարմությամբ տոգորված Մանվել Մամիկոնյան հայ անվանի զորականը: Նրա հիվանդության և կյանքի վերջին պահերի շուրջ Փավստոս Բուզանդը սերունդներին թողել է մի անչափ զգայացունց պատմություն, որն իր դրամատիզմով բացառիկ է մեր մատենագրության էջերում: Արդեն տկար ու հիվանդ, հայ զորավարը անհատնում ծանր վիշտ է ապրում և դժգոհում է իր բախտից ու ճակատագրից, որ ինքը մեռնում է տանը և ոչ կռվի մեջ՝ պատերազմի դաշտում: Վշտից դառնացած զորավարը, հանելով շապիկը և ցույց տալով ճակատամարտերում ստացած բազմաթիվ վերքերի սպիները, զայրույթով և դառնությամբ բողոքում ու բորբոքվում է, թե ինքը ինչո՞ւ չմեռավ պատերազմի դաշտում, ձիու վրա, հայրենիքի թշնամիների դեմ մարտնչելիս. «Ես ի մանկութենէ համակ սնայ ի պատերազմունս, և մեծավ քաջութեամբ զամենայն վէրս յանձն իմ առի. և ընդէ՞ր ոչ եհաս ինձ մեռանել ի պատերազմի»:

Ահա այսպես, ահա այսպիսին էին միջնադարի հայ սպարապետները, որոնք իրենց մահով անգամ ձգտում էին օգտակար լինել հայրենիքին:

Չորրորդ դարից տասնվեց հարյուրամյակ անց՝ 20–րդ դարի վերջերին Արցախյան ազատամարտի բոցերում անձնազոհ ու անձնուրաց նոր զորականներ ու զինվորներ ծնվեցին: Նրանց շարքում անպայմանորեն դրվատելի և հիշատակելի է «Արաբո» կամավորական ջոկատի հրամանատար Մանվել Եղիազարյանը:

«Արաբոյի» Մանվել...Այս պատվանունը նա ձեռք բերեց պատերազմի դաշտում, այսպես է հայտնի լայն հանրությանը, ժողովրդին: Ժողովրդական բանահյուսության մեջ այնքան շատ զրույցներ են շրջանառվում «Արաբոյի» Մանվելի լեգենդար կերպարի շուրջ: Հասարակ ժողովրդի ծոցից ելած Այր մի, որը հերոսացավ Արցախի լեռներում: Եվ ոչ միայն Արցախի: Մանվել Եղիազարյանը զինակիցներով շտապում էր այնտեղ, ուր թշնամու կողմից իրական վտանգ էր առաջանում և որտեղ պետք էր անհապաղ կանխել թշնամու առաջխաղացումը: Նա անձնուրաց ու անձնազոհ, իր կյանքը մշտապես վտանգող հրամանատար էր: Երբեք իր կյանքը բարձր չդասեց իր զինվորների ճակատագրից: Եվ ոչ մի օր չդողաց սեփական կյանքի անվտանգության համար: Նա զինվոր է՝ իր զինվորների նման: Հայրենիքի համար կենաց և մահու գոտեմարտի պահին կամավոր ռազմադաշտ մեկնած զինվոր:

Չորրորդ դարի հայ սպարապետ Մանվել Մամիկոնյանից մինչև քսաներորդ դարավերջի «Արաբոյի» Մանվել...Հերոսության ու հերոսականության գենը ժողովրդի պատմական հիշողության մեջ է, նրա արյան և ուղեղի բոլոր բջիջների մեջ:

20-րդ դարավերջի հայ զինվոր ու զորական Մանվելը՝ «Արաբոյի» Մանվելը իր խենթությամբ և խիզախությամբ, իր բացառիկ ազնվական վարքականոնով, ժողովրդի հանդեպ սիրո և նվիրումի անմնացորդ ավյունով շա՜տ է նմանվում ու հոգեհարազատանում 4-րդ դարի դարավերջի հայ զորական Մանվել Մամիկոնյանին: Երկուսի դեպքում էլ հայրենիքի և ժողովրդի հանդեպ ելակետն ու մոտեցումները նույնն են: Կարևորը ժողովրդական նվիրումի այն պատգամն է ու ոգին, որը հատուկ է մեծ հայրենասեր այրերին: Ժողովրդանվիրումի ամուր պարարներով լեցուն «Արաբո» ջոկատի հրամանատարն ու իր զինակիցները պատերազմի ավարտից հետո ևս պինդ ու անսասան մնացին ժողովրդանվեր դիրքերում, երբեք չկտրվելով մայր-ժողովրդից և չնայելով նրան վերևից՝ թելադրողի կամ հրամայողի դերից:

Փա՜ռք ու հավերժացո՜ւմ 4-րդ դարից մինչև 21-րդ դար՝ Մանվել Մամիկոնյանից մինչև «Արաբոյի» Մանվել ձգվող հայ հայրենասեր բանակի զինվորներին ու զորավարներին: Քանզի նրանցից յուրաքանչյուրը կարող էր բացականչել նույն այդ հերոս Մամիկոնյան Սպարապետի հոգի այրող ու հոգի քրքրող խոսքն ու պատգամը. «Ինչո՞ւ բախտ չունեցավ մեռնելու պատերազմի դաշտում, ձիու վրա, սուրը ձեռքին՝ հայրենիքի թշնամիների դեմ մարտնչելիս...»:

Արմեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու,
հրապարակախոս,
ՀՀ լրագրողների միության անդամ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի տնօրենի պաշտոնում վերընտրվեց Վլադիմիր Հարությունյանը

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի տնօրենի պաշտոնում վերընտրվեց ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Վլադիմիր Հարությունյանը:

Վլադիմիր Հարությունյանը ծնվել է 1957 թ.՝ Լոռու մարզի Քարինջ գյուղում: Ավարտել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտը:

Նա 2006թ.-ից ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի տնօրենն է:

Վլադիմիր Հարությունյանի հիմնական աշխատանքները նվիրված են հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականության հիմնախնդիրներին: Նա ավելի քան 105 գիտական աշխատության հեղինակ է:

Վլադիմիր Հարությունյանին գիտության և կրթության բնագավառում մատուցած ակնառու ծառայությունների համար շնորհվել է Մովսես Խորենացու մեդալ: 2014 և 2016 թվականներին նա ճանաչվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի կողմից հայտարարված «Արդյունավետ գիտաշխատող» մրցույթների հաղթող:

ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի տնօրենի պաշտոնում վերընտրվեց Արամ Պապոյանը

ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի տնօրենի պաշտոնում վերընտրվեց ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արամ Պապոյանը:

Արամ Պապոյանը ծնվել է 1959 թ.՝ Երևանում: Ավարտել է ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետը: 2010թ.-ին ընտրվել է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ:

2006 թ.-ից Արամ Պապոյանը ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի տնօրենն է:

Արամ Պապոյանի գիտական հետազոտություններն ընդգրկում են լազերային ֆիզիկայի, ատոմային ֆիզիկայի և սպեկտրասկոպիայի, քվանտային և ոչ գծային օպտիկայի, օպտիկական պատկերագրման ոլորտները:

Արամ Պապոյանը 4 ժողվածուի և 190 աշխատության հեղինակ է:

Արամ Պապոյանն արժանացել է ՀՀ նախագահի ֆիզիկայի մրցանակի, Օպտիկայի միջազգային հանձնաժողովի «Galileo Galilei» մրցանակի, Անանիա Շիրակացու մեդալի:

ՀՀ ԳԱԱ Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտի տնօրենի պաշտոնում վերընտրվեց Արտակ Մկրտչյանը

ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտի տնօրենի պաշտոնում վերընտրվեց ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արտակ Մկրտչյանը:

Արտակ Մկրտչյանը ծնվել է 1963 թ.-ին՝ Երևանում: Ավարտել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետը: Նա ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտի տնօրենի պաշտոնը զբաղեցնում է 2006 թ.-ից:

Արտակ Մկրտչյանի գիտական գործունեության գլխավոր ուղղություններն են՝ էլեկտրամագնիսական ալիքների և տարրական մասնիկների փոխազդեցությունը տարբեր միջավայրերի հետ արտաքին ազդակների առկայությամբ ու բացակայությամբ, ակուստիկ ալիքների տարածումը ռեզոնանսային բնույթի անհամասեռություններ պարունակող բազմաշերտ միջավայրերում, նոր տիպի որոշակի հատկություններով օժտված տարբեր կարգավորվածության աստիճան ունեցող միջավայրերի սինթեզը, սինթեզված նոր միջավայրերի հետ իոնացնող ճառագայթների փոխազդեցության արդյունքում ի հայտ եկող ֆիզիկական երևույթների ուսումնասիրությունը:

Արտակ Մկրտչյանը հարյուրից ավելի գիտատեխնիկական հրապարակումների հեղինակ է:

ՀՀ ԳԱԱ Բյուրականի աստղադիտարանի տնօրենի պաշտոնում ընտրվեց Արեգ Միքայելյանը

ՀՀ ԳԱԱ Վիկտոր Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանի տնօրենի պաշտոնում ընտրվեց Արեգ Միքայելյանը:

Արեգ Միքայելյանը ծնվել է 1962 թ.՝ Երևանում: Ավարտել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետը:

Արեգ Միքայելյանի գիտական նախասիրություններն են՝ աստղագիտական շրջահայություններ, սպիտակ թզուկ և պայթյունային փոփոխական աստղեր, ակտիվ գալակտիկաների որոնումներ և բազմալիքային ուսումնասիրություններ, տիեզերական ենթակարմիր, ռենտգենյան և ռադիո աղբյուրներ, վիրտուալ աստղադիտարաններ:

Արեգ Միքայելյանը 11 գրքույկի, 192 հոդվածի, 17 էլեկտրոնային կատալոգի հեղինակ է: Նա ղեկավարել է ՀՀ գիտության պետական կոմիտեի թեմատիկ, ANSEF, CRDF ARP1-2849-YE-06, ISTC A-1451, A-1606, CNRS, DFG, DAAD, NASA, COST և այլ դրամաշնորհային ծրագրեր:

Արեգ Միքայելյանն արժանացել է Եվրասիական աստղագիտական ընկերության, Հայկական ֆիզիկոսների ընկերության, էլեկտրոնային գիտության մրցանակների:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՑ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԳՈՅԱՄԱՐՏԵՐԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ (1915-1923 թթ.)

ԸՍՏ ԱԿԱՆԱՏԵՍ ՎԵՐԱՊՐՈՂՆԵՐԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Օսմանյան կայսրության երիտթուրք կառավարության պարագլուխներն Առաջին աշխարհամարտին մասնակցեցին զավթողական նպատակներով և արևմտահայոց սպանդն իրագործելու իրենց երբեմնի պանթուրքական և պանիսլամական հրեշավոր ծրագրով: Ուստի զենք փնտրելու և հայ երիտասարդներին թուրքական բանակ զորակոչելու պատրվակով, երկրի ողջ տարածքով ծայր առան հայերի ձերբակալություններ, բռնի տեղահանություններ և զանգվածային կոտորածներ:

ՎԵՐԺԻՆԵ ՍՎԱԶԼՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող

Ողբերգական այդ օրերին հայ ժողովրդի հոգում վերազարթնեց դարերի խորքից ժառանգաբար արյան հետ եկող «Մահ իմացեալը» ստրուկ կյանքից նախընտրելու և բռնությանը միահամուռ ուժով դիմադրելու հերոսացման խիզախ ոգին: Ինքնապաշտպանական գոյամարտեր տեղի ունեցան Յոզղատի Ագդաղում, Շատախում, Վանում, Մուշում, Սասունում, Շապին-Գարահիսարում, այնուհետև նաև Կիլիկիայում՝ Զեյթունում, Ֆընդըջագում, Մուսա Լեռում, Ուրֆայում, ավելի ուշ՝ 1920-1921 թթ., Մարաշում, Այնթապում, Հաճընում և այլուր: Այդ բոլորի մասին մեզ են հաղորդել ականատես վերապրողներն իրենց հուշ-վկայություններում:

Յոզղատը, որն ուներ 48 հայկական գյուղ՝ շուրջ 75 հազար հայ բնակչությամբ, դիմադրում է Օսմանյան կայսրության կազմակերպած զորահավաքին, զինահավաքին և բռնագաղթին:

1915 թ. ապրիլին Յոզղատի շրջանում թուրք ոստիկաններն իսլամ այլազան ցեղերի և տգետ ու մոլեռանդ ամբոխի հետ հարձակվում են հայկական Քիլլեր, Բեռիրենկ, ապա նաև Չաթ, Բուրուն-Ղըշլա, Էյլենջե, Գումգույու, Թենթիլ և այլ գյուղերի վրա՝ պահանջելով հայ երիտասարդներին զորակոչել թուրքական բանակ և հավաքել բնակչության զենքերը: Յոզղատցիները կտրականապես մերժում են: Սկսվում է երկկողմ հրացանաձգությունը: Թուրքերը, տեսնելով, որ անհնար է նրանց հաղթել, հրկիզում են նշված գյուղերի փայտաշեն տները: Անօթևան մնացած համագյուղացիները ստիպված բարձրանում են մոտակա Ագդաղի անմատչելի լեռը, որտեղ իրենց խիզախությամբ հայտնի դարձած Սամվել Ինճեյանի, Հաջիբեյ Փափազյանի, Աբիսողոմ Առաքելյանի, Ադամի, Գյուլբենկի, Զիլ-Օհանի, Արթինի, թենթիլցի Մանուկի և այլ խմբապետերի ղեկավարությամբ կազմակերպում են մարտական ջոկատներ և չորս տարի շարունակ, կիրառելով պարտիզանական պայքարի ձևը, մինչև 1918 թ. զինադադարը, խիզախորեն մարտնչում են Ագդաղի բարձունքներում և տարածաշրջանում:

Եթե Ագդաղի քառամյա գոյամարտն իր լայնածավալ ընդգրկումով, բազմաթիվ մարտական խմբերի և ժողովրդական զանգվածների անձնուրաց մասնակցությամբ կենաց ու մահվան պայքար էր թուրքական կառավարության զինված զորաբաժինների դեմ, ապա Վանի ինքնապաշտպանական հերոսամարտն իր ռազմավարական կազմակերպվածությամբ առանձնապես օրինակելի դարձրեց խիզախ վանեցիների սխրանքը, որն սկիզբ էր առել Վանի ղեկավար Պր. Իշխանի և թուրքական խորհրդարանի անդամ Արշակ Վռամյանի նկատմամբ Զևդեթ փաշայի կազմակերպած դաժան հաշվեհարդարով ու շատախցիների զինված ինքնապաշտպանությամբ:

Վան քաղաքը բաժանված էր երկու մասի՝ Այգեստան և Քաղաքամեջ: Այգեստանի Համուդ աղայի թուրքական զորանոցը, որը մինչ այդ դատարկ էր, այդ օրը լցվել էր 130 թուրք զինվորներով և դարձել չարիք հայ կռվողների համար: Բայց վանեցիները միակամ էին և վճռական. նրանք ուխտել էին՝ «Զեն ի ձեռին կռվելով մեռնիլ, քան՝ ոչխարներու պես մորթոտվիլ»:

Վանեցիները հրավիրում են ընդհանուր ժողով և ընտրում դիմադրողական ինքնապաշտպանական զինվորական մարմին՝ Արմենակ Եկարյանի, Արամ Մանուկյանի և Հրանտ Գալիկյանի ղեկավարությամբ: Վանում էին նաև ֆիդայիներ Կայծակ Առաքելը, բուլղարացի զինագործ Գրիգորը, նկարիչ Փանոս Թերլեմեզյանը և ուրիշներ: Ընտրվում է նաև պարենավորման մարմին, ամրաշեն վաշտ, որտեղ աշխատելու ընդունակ տղամարդիկ սկսում են դիրքեր փորել, իսկ երկաթագործները շտապ պատրաստում են նիզակներ՝ զինելով բնակչությանը: Ամրաշեն վաշտը, հնարամտությամբ, ստորգետնյա խրամատ փորելով, աննկատ հասնում է մինչև թուրքական զորանոցի հատակը և այն տակից պայթեցնում: Թուրքական զորանոցն իր զորքերով ոչնչացվում է՝ վանեցիներին ազատելով այդ մղձավանջից: Ստեղծվել է նաև կռվողներին օգնության հասնող «Թռուցիկ խումբ», վառոդի արտադրություն, փամփուշտարանի արհեստանոց, խնամատար մարմին, կարմիր խաչի հիվանդանոցներ և այլն:

Վանի ինքնապաշտպանության մեջ իր նշանակալի դերն ուներ Վարժապետանոցի սաների փողային նվագախումբը՝ ֆանֆառը, որն ամբողջ օրը նվագելով շրջում էր փողոցներով ու ոգևորում կռվողներին և ընդհակառակը՝ բացասաբար էր անդրադառնում թուրքերի վրա: Մայիսի 6-ին Վանի բերդի վրա ծածանվում է հայկական դրոշակը:

Վասպուրականի դիմադրողական ինքնապաշտպանության ականատես Շավարշ Հովիվյանի վկայությամբ. «Առաջին օրէն իսկ Այգեստանը ստացաւ ինքնօրէն կառավարութեան մը երեւոյթը, ան իր Զին., Քաղ. եւ Տնտեսական Վարչութիւններովը ամենացայտուն ապացոյցը կ՚ուտար տոհմային ձիրքի ու ձեռնհասութեան, կատարելապէս ռամկավարական ուղղութեամբ, այսինքն իւրաքանչիւր անհատ յօժարակամ իր բաժինը կը բերեր ինքնապաշտպանութեան փրկարար գործին»:

1915 թ. գարնանը թուրքական կանոնավոր զորամասերը քրդական աշիրաթների հետ հարձակվում են Տարոն գավառի հայ բնակչության վրա: Սակայն Մուշի հայերը պատրաստ չէին ինքնապաշտպանության, քանի որ գավառի հայ ղեկավարները միակարծիք չէին դիմադրություն կազմակերպելու համար: Հետևաբար, Ցրոնք, Գոմս գյուղերի բնակիչները գազանաբար ոչնչացվեցին: Գոմերի մեջ մոխրացրին Վարդենիսի, Մշախշենի, Աղբենիսի, Ավզուտի, Խվների և շրջակա այլ գյուղերի ողջ հայ բնակչությանը:

Իսկ Սասունի պաշտպանների խմբերը, որոնց գլխավորում էին Փեթարա Մանուկը, Ռուբենը, Կոմսը, իշխան Շառոն և ուրիշներ, չկարողացան կազմակերպել ինքնապաշտպանությունը: Եվ այստեղ ևս, անղեկ մնացած Սասունի գոյամարտը դաժանորեն ճնշվում է:

Չենթարկվելով թուրքական կառավարության կորստաբեր հրամանին՝ Շապին-Գարահիսարի հայերը հավաքվում և որոշում են կռվել մինչև արյան վերջին կաթիլը: Հունիսի 2-ին բանտից ազատված ավազակների խուժանը թուրք ոստիկանների հետ հարձակվում է Շապին-Գարահիսարի շուկայի վրա, և սկսվում է կողոպուտը, իսկ հայ խանութպաններին ձեռքերը կապկպած տանում են բանտ: Շապինգարահիսարցիները շտապ ժողով են գումարում և ստեղծում դիմադրողական զինվորական խորհուրդ՝ Ղուկաս Դեովլեթյանի, Ավագ Տուրիկյանի, Գարեգին Կարմիրյանի, Շապուհ Օզանյանի և Իսրայել Օզանի ղեկավարությամբ: Հաջորդ օրը թուրքական թնդանոթների ռմբակոծումից հրդեհվում է հայկական Պարտեզ թաղամասը և ավերվում շուրջ 3 հազար փայտաշեն տուն: Անօթևան մնացած հայեր՝ շուրջ 5.062 հոգի, ստիպված նահանջում են մոտակա բարձունքին կառուցված հնամենի բերդը, որը թուրքերը շրջապատում են և գնդակոծում: Սկսվում է երկկողմ հրաձգություն: Շուտով թուրքերը, համալրում ստանալով Սեբաստիայից, գերմանական սպաների աջակցությամբ սկսում են ռմբակոծել բերդը:

Հունիսի 29-ին, պաշտպանության 27-րդ օրը, թուրքերը ներխուժում են բերդ, սկսում են կացնահարել անպաշտպան ողջ մնացածներին: Պատվախնդիր հայուհիները նետվում են անդնդախոր ձորը, որպեսզի փրկեն հայ կնոջ պատիվը:

Ահավոր մղձավանջ ապրեց նաև Կիլիկիայի հայությունը: Հայաշատ Կիլիկիայով էր անցնում բացառիկ կարևորություն ներկայացնող Բեռլին-Բաղդադ երկաթուղին: Այդ հանգամանքը մտահոգում էր Թուրքիայի կառավարությանը, քանի որ Կիլիկիայի աշխատասեր ու գործունյա հայությունն իր բարգավաճ վիճակով կարող էր տիրապետող դառնալ թուրքական տնտեսության մեջ: Լեռնային Կիլիկիայում Հաճընից, Զեյթունից մինչև Դյորտյոլ սփռված էին հայկական գյուղերն ու ավանները, որոնց բնակիչները զբաղվում էին մետաքսագործությամբ, ջուլհակությամբ, գորգագործությամբ և այլ տոհմիկ արհեստներով:

Կիլիկիայի արծվաբույն Զեյթունը վաղուց արդեն թուրքական բռնակալության զայրույթի կիզակետն էր դարձել: Հետևաբար, ժամանակն էր հին հաշիվները մաքրել նաև համարձակ զեյթունցիների հետ, որոնք ինչպես անցյալում, այս անգամ ևս կարող էին անձնվեր պայքարի դուրս գալ, բայց դրան խանգարում են Կիլիկիայի կաթողիկոս Սահակ Բ Խաբայանն ու հայ երևելիները, որոնք, հավատալով թուրքական կառավարության կեղծ խոստումներին, «հնազանդության» կոչ են անում: Այնինչ զեյթունցի մայրերն իրենց զավակներին քաջ ու անվախ դաստիարակելու համար իրենց բարբառով երգել են, որը ներկայացնում եմ կից գրական թարգմանությամբ.

«Բոլուզս վօղը գդրաջ մը գունա,
Կիդէնը փռէ լէաշը դուշմունա,
Այծօթ աբրջօն թիֆօնգը բէջը
Դալմըշ բիդ ինա դէօգիւշան մէջը»:
«Որդիս վաղը կդառնա կտրիճ,
Թշնամու դիակը կփռե գետնին,
Արծաթ օղակով հրացանն ուսին
Ինքնամոռաց նա պիտի կռվի»:

Թուրքական կառավարությունը ինչպես այլ վայրերում, Կիլիկիայում ևս հավաքել էր հայերի զենքերը, երիտասարդներին զորակոչել թուրքական բանակ և ոչնչացրել: Նրանցից շատերը կարողացել էին բանակից փախչել և թաքնվել Զեյթունում: Մայիսի կեսին Խուրշիդ փաշան 3.000 զորքով գալիս, պահանջում է դասալիքներին, որոնք ապաստանել էին Բերզնկա լեռան վրա կառուցված հինավուրց Ս. Աստվածածին վանքում: 1915 թ.

մարտի 25-ին թշնամին սկսում է գնդակոծել վանքը: Զեյթունի ինքնապաշտպանները, Փանոս Չաքրյանի գլխավորությամբ, պատասխանում են թշնամուն՝ խնայելով իրենց փոքրաքանակ փամփուշտները: Զեյթունցի քաջերը, Արամ Չոլաքյանի ղեկավարությամբ, վանքի ետևի լուսամուտներից թռչելով, անտառների միջով անցնում են Ֆընդըջագ՝ օգնության հասնելու այնտեղ ևս ծայր առած դիմադրողական ինքնապաշտպանությանը:

1915 թ. գարնանից սկսվում է Կիլիկիայի հայության բռնագաղթն ու կոտորածը: Դատարկվում է Մարաշը, Այնթապը, Հաճընը, Անտիոքը, Իսկենդերունը, Քեսաբը: Մուսալեռցիները, տեսնելով, որ հերթն իրենց է հասնելու, հուլիսի 19-ին Մուսա Լեռան յոթ գյուղերի գրեթե բոլոր բնակիչները միաբանվելով, որոշում են չենթարկվել տեղահանության կորստաբեր հրամանին: Մուսա Լեռան հերոսամարտի մասնակից, 105-ամյա Մովսես Փանոսյանը (ծնվ. 1885 թ.) իրեն հատուկ երիտասարդական ավյունով է պատմել այդ դեպքերը՝ վերհիշելով մուսալեռցիների բարբառով երդումը.

«Իս հուս ծննուծ իմ, հո՛ւս ալէ բըր միռնիմ,
Իս չը՛մ ուրթօ եասսէր քիմը դուշմանէն
Եամրէն վըրքը չարչարանքում միռնիլ.
Թվունքը ծառիս գը միռնէմ եաս դիղը,
Թաքա մուհաջըր չը՛մ ընեօ»:
«Ես այստեղ եմ ծնվել, այստե՛ղ էլ կմեռնեմ,
Ես չե՛մ գնա ստրուկի պես թշնամու
Հրամանի տակ չարչարանքով մեռնելու.
Հրացանը ձեռքիս կմեռնեմ այստեղ,
Բայց գաղթական չե՛մ դառնա»:

(Շարունակելի)

Նոր քաղաքապետը հայ է

Գլենդելի նոր քաղաքապետ է ընտրվել հայազգի Վարդան Կարապետյանը: Նա ընտրվել է մայիսի 1-ին Գլենդելի քաղխորհրդի անդամների քվեարկության արդյունքում: Մինչ այդ Կարապետյանը քաղխորհրդի անդամ էր:

Ինչպես հայտնում է The Los Angeles Times-ը, Գլենդելի քաղաքապետն ընտրվում է քաղխորհրդի անդամների կողմից՝ մեկ տարի պաշտոնավարման ժամկետով: Մայիսի 1-ին Գլենդելի քաղաքապետարանում պաշտոնները ստանձնել են նաև քաղխորհրդում վերընտրված Զարեհ Սինանյանը, Արա Նաջարյանը, ինչպես նաև առաջին անգամ ընտրված Վրեժ Աղաջանյանը: Պարբերականի փոխանցմամբ՝ Արդի Քասախյանը կշարունակի գործունեությունը որպես քաղաքապետարանի քարտուղար, իսկ Ռաֆֆի Մանուկյանը որպես գանձապահ: Հիշեցնենք, որ Գլենդելը համարվում է ԱՄՆ-ում ամենամեծ համայնք ունեցող քաղաքներից մեկը և նրա բնակչության հիսուն տոկոսը հայեր են:

Իզաբել Մոթան

Գյուլբենկյան հիմնարկության նոր նախագահ

Հաջորդելով Արթուր Սանթոս Սիլվային, որն այդ պաշտոնը վարել էր 2012-17 թվերին, մայիսի 3-ին Իզաբել Մոթան ստանձնել է «Գալուստ Գյուլբենկյան» հիմնարկության նախագահի պաշտոնը առաջիկա հինգ տարիների համար: Տիկին Մոթան հիմնարկության հոգաբարձու մարմնի անդամ է 1999-ից ի վեր: Ծնվել է Լիսաբոնում 1951-ին և մասնագիտությամբ տնտեսագետ է: Պետական և համալսարանական ոլորտներում ղեկավար պաշտոններ զբաղեցնելով ձեռք է բերել աշխատանքային լայն փորձառություն:

Քարշը վերադառնում է Օտտավա

Կանադայում ՀՀ դեսպան Արմեն Եգանյանի ու տիկնոջ՝ Մարիայի ջանքերի և, անշուշտ, պետական մարմինների բարյացակամ վերաբերմունքի շնորհիվ հունիսին մայրաքաղաք Օտտավայի Շատո Լորիե (Chatean Laurier) հյուրանոցի առաջ կտեղադրվի 20-րդ դարի մեծագույն լուսանկարիչներից մեկի՝ Յուսուֆ Քարշի հուշարձանը՝ իր լուսանկարչական ապարատով, տեղեկանում ենք «Diplomat» պարբերականի խմբագիր Ջենիֆեր Քեմպբելի հոդվածից, որն արտատպել է «Արմինյն Միրոր-Սփեթեյթր» շաբաթաթերթը:

Յուսուֆ և Էստրելիտա Քարշերը այդ հյուրանոցում են ապրել 18 տարի: Աշխարհահռչակ լուսանկարիչը վախճանվել էր 2002 թվին: Հուշարձանի հեղինակն է Մոնրեալում ապրող բժիշկ, քանդակագործ Մկրտիչ Տարաքչյանը:

«Սա մի տեսակ երախտիքի արտահայտություն է մեր ժողովրդից դեպի Կանադայի ժողովուրդը՝ Կանադայի կազմավորման 150-րդ և հայ-կանադական դիվանագիտական հարաբերությունների հաստատման 25-րդ տարեդարձների առթիվ»,- նշել է դեսպան Արմեն Եգանյանը:

«Յուսուֆ Քարշը օտտավացիների կուռքն էր: Բոլորը ճանաչում և սիրում են նրան: Խորհրդարանի խոսնակի գրասենյակում կախված է նրա Ունիստոն Չերչիլի դիմանկարը, որն աշխարհով մեկ ճանաչված է որպես եզակի ստեղծագործություն»,- գրում է Ջենիֆեր Քեմպբելը հոդվածի վերջում:

Յուսուֆ Քարշն, այսպիսով, 15 տարվա բացակայությունից հետո դարձյալ կվերադառնա իր հարազատ Օտտավա:

Հ. Ծ.

Վերականգնված Փարավոնը



Եգիպտոսի Լուքսոր քաղաքում կայացավ Ռամզես II Փարավոնի 11 մետր բարձրությամբ արձանի հանդիսավոր բացումը: Սև գրանիտից պատրաստված 75 տոննա կշռող արձանը հայտնաբերվել է 1958 թվականին՝ 57 կտորների վերածված: Գիտնականները ենթադրում են, որ արձանը ավերվել է ուժեղ երկրաշարժից, IV դարում: Հին ժամանակներում արձանը զարդարել է մ.թ.ա. 14-րդ դարում կառուցված Լուքսորի հռչակավոր տաճարի մուտքը:

Արձանը բացառիկ է նրանով, որ Փարավոնը պատկերված է կանգնած դիրքով, այլ ոչ թե գահին նստած, ինչպես ընդունված էր այն ժամանակներում: Փարավոնի ոտքերի մոտ տեղադրված է Փարավոնի կնոջ՝ Նեֆերտարիի մարմինը: Կնոջ բարձրությունը ընդամենը մեկ և կես մետր է: Արձանի ջարդված կտորները, որոնք պահվում են թանգարանում, որոշվեց հավաքել և ամբողջացնել որպես լիարժեք արձան, որ հնագետները որոշել էին անցյալ տարվա նոյեմբերին: Քանի որ արձանի կտորները լավ էին պահպանված, վերականգնման աշխատանքները տևեցին մոտ կես տարի:

Փառքի բեռը

Մի անգամ աշխարհահռչակ երգիչ Կառուզոն ճանապարհորդում էր ավտոմեքենայով: Մեքենան խափանվեց, և նա ստիպված եղավ կանգ առնել ինչ-որ ֆերմայի մոտ: Երբ նա ֆերմերին ասաց, թե ով է ինքը և տվեց իր անունը, ֆերմերը հուզմունքից խեղդվելով ասաց.

- Մի՞թե ես կարող էի ենթադրել, որ նշանավոր ճանապարհորդ Ռոբինզոն Կռուզոն մի օր հյուր կլինի իմ խոհանոցում:

Լսելով ֆերմերի խոսքերը, Կառուզոն նկատեց.

- Ոչ մի հռչակավոր մարդ, այնքան էլ հայտնի ու նշանավոր չէ, ինչպես կարծում է:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը հայտարարում է մրցույթ ինստիտուտի բարբառագիտության բաժնի գիտաշխատողի (1տեղ, 0,5 դր.) թափուր տեղի համար:

Դիմողները պետք է ունենան գիտական աստիճան, հրապարակված գիտական աշխատանքներ:

Անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

ա) դիմում,
բ) լուսանկար,
գ) քաղվածք աշխատանքային գրքույկից,
դ) ինքնակենսագրություն,
ե) բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը,
զ) գիտական աստիճանը հաստատող դիպլոմի (դիպլոմների) պատճենը,
է) կադրերի հաշվառման անձնական թերթիկ,
ը) տեղեկանք մշտական բնակության վայրի,
թ) հրատարակված աշխատանքների ցանկ,
ժ) բնութագիր վերջին աշխատավայրից:

Փաստաթղթերը պետք է ներկայացնել մեկ ամսվա ընթացքում (հայտարարությունը հրապարակելու օրվանից) հետևյալ հասցեով՝ Երևան, Գր. Լուսավորչի 15, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ (գիտական քարտուղարին), հեռ. 060-62-35-77:

ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտը հայտարարում է մրցույթ հետևյալ թափուր տեղերի համար

Լաբորատորիաների վարիչների

1. Բջջի կենսաբանության և վիրուսաբանության.
2. Մոլեկուլային էնզիմաբանության.
3. Մոլեկուլային գենետիկայի.
4. Բջջային ակտիվության կարգավորման.
5. Մոլեկուլային թաղանթաբանության.
6. Կենսագործընթացների համակարգչային մոդելավորման.
7. Մոլեկուլաբջջային իմունաբանության:

Գիտական խմբերի ղեկավարների

1. Կենսաինֆորմատիկայի.
2. Պոպուլյացիաների էկոգենետիկայի:

Անհրաժեշտ փաստաթղթերը հայտարարության օրվանից մեկ ամսվա ընթացքում պետք է ներկայացնել հետևյալ հասցեով՝ Երևան, Հասրաթյան 7, հեռախոս 28-17-02, 28-16-26:

Գիտություն

Գլխավոր խմբագիր՝ Ա. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24բ, հեռ. 56-80-14: Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:
Ստորագրված է տպագրության՝ 22.05.2017 թ.:

"ТИТУТЮН" ("Наука") газета НАН РА